ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.09.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/195

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ Նորակերտի համայնքապետարանի ներկայացուցիչ

Վ. Դովլաթյանի (լիազորագիր տրված՝ 27.08.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.08.2020թ. թիվ 26/26-1/12323-2020 գրությամբ «Արտդիանշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը Նորակերտի համայնքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 13.08.2020թ. թիվ 243 գրության հիման վրա 18.08.2020թ. թիվ 26/26-1/12323-2020 գրությամբ նախաձեռնել է «Արտդիանշին» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Արտդիանշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Արտդիանշին» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«www.gnumner.am կայքում 17.07.2020թ. ժամը 16:37-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին հայտարարություն: 27.07.2020 թվականին ժամը 08:45-ին համայնքապետարանի կողմից Ընկերությանն է ուղարկվել պայմանագրի նախագիծը: Պայմանագրի նախագիծը՝ կնքված և ստորագրված տարբերակով, որակավորման և պայմանագրի ապահովումների հետ միասին Ընկերությունը համայնքապետարան է ներկայացրել 07.08.2020թ.՝ 10 աշխատանքային օրյա ժամկետում: Պայմանագիրը կնքվել է նաև համայնքի ղեկավարի կողմից: Սակայն ի զարմանս ինձ 12.08.2020թ. համայանքապետարանի կողմից ստանում եմ նամակ, որ Ընկերությունը չի ներկայացրել ոչ պայմանագիրը, ոչ էլ ապահովումները: Այնուհետև Ընկերությունը ստանում է նամակ, առ այն, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում նախաձեռնել է «Արտդիանշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ, որի դեմ Ընկերությունը առարկում է:

Այժմյան Հայաստանում չպետք է տեղի ունենար այսպիսի գործընթաց, քանի որ Ընկերությունը 27.07.2020 թվականին՝ ստանալով պայմանագրի նախագիծը, մինչև 11.08.2020 թվականը՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, ժամանակ ուներ ներկայացնելու պայմանագիրը և ապահովումները, որոնք և Ընկերության կողմից ներկայացվել են 07.08.2020 թվականին:

Եթե համայնքապետարանը ուներ առարկություններ, ապա ինչու է կնքել ու ստորագրել պայմանագիրը, ի հավաստումն նրա, որ ամեն ինչ նորմալ է: Այդ ինչպես է ստացվում, որ կնքված պայմանագրի դեպքում Ընկերությանը մեղադրում են պայմանագիր չստորագրելու, ապահովումներ չներկայացնելու մեջ և եթե պայամանգիրը և ապահովումները Ընկերության կողմից ներկայացվել են օրենքով սահմանված ժամկետի մեջ, պայմանագիրը կնքվել է իմ և համայնքի ղեկավարի կողմից, ապա ինչպես է համայնքապետարանը 12.08.2020 թվականին Ընկերությանը զրկում պայմանագիր կնքելու իրավունքից»:

Ամփոփելով Ընկերությունը խնդրել է «Արտդիանշին» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում հաշվի առնել այն փաստը, որ Ընկերության կողմից ներկայացվել են պայմանագիրն ու ապահովումները:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/195 ընթացակարգի շրջանակներում 28.08.2020թ. ժամը 11:00-ին և 11.09.2020թ. ժամը 12:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Նորակերտի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Նորակերտի համայնքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.08.2020թ. թիվ 243 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ Արմավիրի մարզի Նորակերտի համայնքապետարանի կողմից հուլիսի 7-ին հայտարարվել է Նորակերտի համայնքի գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման ՀՀ-ԱՄ-ՆՀ-ԳՀԱՇՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցել է «Արտդիանշին» ՍՊԸ-ն՝ ճանաչվելով ընտրված մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա (եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից) «Արտդիանշին» ՍՊԸ-ն չի կատարել օրենքի վերը նշված պահանջը և զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն խնդրել է ձեռնարկել համապատասխան միջոցառումներ մասնակցին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետի հիման վրա գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու նպատակով:

Միաժամանակ հայտնել է, որ տրամադրում է Ընկերության վերաբերյալ տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/199 ընթացակարգի շրջանակներում 28.08.2020թ. ժամը 11:00-ին և 11.09.2020թ. ժամը 12:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 28.08.2020թ. ժամը 11:00-ին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ պնդում է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/195 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/195 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Նորակերտի համայնքապետարանի կողմից կազմակերպվել է «ՀՀ-ԱՄ-ՆՀ-ԳՀԱՇՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արտդիանշին» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Արտդիանշին» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

3. Պատվիրատուն 17.07.2020թ. և 27.07.2020թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել է Ընկերությանը՝ ներկայացնելով պայմանագրի նախագիծը:

4. Նորակերտի համայնքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.08.2020թ. թիվ 243 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը չի կատարել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը և զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից»:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.08.2020թ. թիվ 26/26-1/12323-2020 գրությունը, Նորակերտի համայնքապետարանի 13.08.2020թ. թիվ 243 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Արտդիանշին» ՍՊԸ-ի դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1.Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***<u>Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի</u>***

<u>ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:</u> Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին:

Կարգի 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝

12) ***<u>ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:</u>***

13) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ***<u>ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:</u>***

Այսպես՝ Նորակերտի համայնքապետարանի կողմից կազմակերպվել է «ՀՀ-ԱՄ-ՆՀ-ԳՀԱՇՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արտդիանշին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Արտդիանշին» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Պատվիրատուն 17.07.2020թ. և 27.08.2020թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել է Ընկերությանը՝ ներկայացնելով պայմանագրի նախագիծը:

Այսպիսով՝ Նորակերտի համայնքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.08.2020թ. թիվ 243 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը չի կատարել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը և զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, մինչդեռ արձանագրում եմ, որ ՍՑ-ՆԳ-2020/195 ծածկագրով ընթացակարգի քննության շրջանակներում «Արտդիանշին» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել ՀՀ-ԱՄ-ՆՀ-ԳՀԱՇՁԲ-20/1 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Արտդիանշին» ՍՊԸ-ի և Նորակերտի համայնքապետարանի միջև երկկողմ կնքված պայմանագիրը՝ հավելվածներով:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել, որ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ ***<u>եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:</u>***

Ընդ որում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ գործում առկա է «Արտդիանշին» ՍՊԸ-ի և Նորակերտի համայնքապետարանի միջև կնքված ՀՀ-ԱՄ-ՆՀ-ԳՀԱՇՁԲ-20/1 ծածկագրով պայմանագիր, ուստի գտնում եմ, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել Ընկերության կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելու փաստը, հետևաբար գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.08.2020թ. թիվ 26/26-1/12323-2020 գրությամբ «Արտդիանշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**